

ANI YENGIBARYAN

## PRICE ABUSES IN THE SECURITIES MARKET: INTERNATIONAL EXPERIENCE AND MECHANISMS FOR ITS USE IN THE REPUBLIC OF ARMENIA

**Key words:** market abuse, unfair use of internal information, price abuse, administrative sanctions, criminal sanctions.

*Abuses in stock market have negative effect in natural pricing mechanisms, market stability and participants.*

*As in a number of countries, Armenia included the market is a subject to both criminal and in administrative liability. According to Article 190.2 of the Criminal Code, the abuse of the price in the securities market is punished with a fine in the amount of up to 200 minimal salaries, or deprivation of the right to hold certain positions or to engage in certain activities for a term of two to four years. However, there are shortcomings in practice, which hinder the effective disclosure of violations by the relevant authorities in Armenia. One of the problems is that in stock market criminal liability may only be provided on natural people, which means that only administrative liability may be provided on legal entities that made the securities market abuses. In addition, to the RA legislation and the powers of the supervisor do not comply with international best practices and practicals.*

*These problems can be solved only if appropriate procedures are elaborated in full international cooperation, which will enable to more effectively detecting market misconduct.*

ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Տնտեսագիտություն, բակալավրիատ,  
2-րդ կուրս

## ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

**Հիմնաբառեր.** բանկ, ընդհանուր կապիտալ, շահութաբե-  
րություն, վարկ

*Աշխատանքում հիմնական շեշտը դրվել է ՀՀ բանկային համակարգի ներկայիս վիճակի գնահատման վրա: Վերլուծվել է առևտրային բանկերի հաճախորդների շուկան, ամփոփ կերպով փորձվել է 2017 թ. վերջին եռամսյակի ֆինանսական գնահատականը, ուսումնասիրվել են բանկերի ներդրումային գործունեությունը, միջազգային ինտեգրման ուղիները, արտասահմանյան կապիտալի մասնակցության չափը ՀՀ բանկային համակարգում: Ներկայացվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:*

*Համաշխարհային տնտեսության զարգացման ամենաբնորոշ գծերից մեկը, որով կարելի է մեկնաբանել 21-րդ դարի զարգացման հիմնական միտումը՝ գլոբալացումն է, որն ազդում է բոլոր գործընթացների վրա: Ներկայումս հատկապես խորացել է ֆինանսական գլոբալացումը, և վերազգային բանկերում կենտրոնացված են այնքան ֆինանսական ռեսուրսներ, որ կարճ ժամանակում կարող են փլուզել ցանկացած երկրի տնտեսություն: Ֆինան-*

սական շուկայում հիմնական դերակատար է բանկային համակարգը, և կարևորվում է բանկային համակարգի միջազգային ինտեգրումը համաշխարհային արժույթաֆինանսական հարաբերություններին:

Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ կարելի է առանձնացնել միջազգային բանկային համակարգին միասնացման հետևյալ ձևերը<sup>1</sup>

1. 100% օտարերկրյա կանոնադրական կապիտալով բանկերի բացում,
2. ազգային բանկերի կապիտալում մասնակցություն,
3. դուստր բանկերի և մասնաճյուղերի բացում,
4. բանկերի ներկայացուցչությունների աշխատանքների կազմակերպում,
5. համատեղ ձեռնարկատիրություն,
6. ազգամիջյան բանկերի ստեղծում,
7. թղթակցային հարաբերությունների հաստատում միջազգային ֆինանսական հաստատությունների հետ:

Տարբեր երկրների բանկային շուկաներ արտասահմանյան բանկերի ներխուժման ամենակիրառելի միջոցներից մեկը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) և Միջազգային ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվող սխեման է, ըստ որի՝ նրանք գնում են միջին և ոչ մեծ տարածաշրջանային բանկերի բաժնետոմսերի փաթեթները, օգնում են նրանց զարգանալ, իսկ հետո իրենց մասնաբաժինը վաճառում են արտասահմանյան ներդրողներին:

Վերջին տասնամյակում և՛ զարգացած, և՛ զարգացող երկրներում համաշխարհային տնտեսությունը ականատես է եղել ինտեգրման գործընթացին՝ կապիտալի միջազգային հոսքերի ահռելի մեծացմամբ: Համաշխարհային ֆինանսական հոսքերը շարունակում են մնալ ավելի ցածր մակարդակի վրա, քան մինչև ֆինանսատնտեսական ճգնաժամը: Այս ամենում իր դերն ունի բանկերի կողմից վարկավորման ծավալների կրճատումը: Բանկային հատվածի հոսքերի տարեկան մակարդակը ընկել է 1/3-ով<sup>2</sup>:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներհոսք դիտարկվում է այն երկրներում, որտեղ առկա է գրավիչ ներդրումային միջավայր: Ներհոսքի և արտահոսքի տեսանկյունից շարունակում է առաջատար մնալ ԱՄՆ-ն: Բավականին ակտիվ է նաև Չինաստանը:

#### Աղյուսակ 1

##### ՕՈՒՆ-երի ներհոսքով և արտահոսքով աշխարհի երկրների առաջատար հնգյակը<sup>3</sup>

| Ներհոսք (մլրդ դոլար) | Արտահոսք (մլրդ դոլար) |
|----------------------|-----------------------|
| ԱՄՆ 391              | ԱՄՆ 299               |
| Մեծ Բրիտանիա 254     | Չինաստան 183          |
| Չինաստան 136         | Նիդեռլանդներ 174      |
| Հոնկոնգ 108          | Ճապոնիա 145           |
| Նիդեռլանդներ 92      | Կանադա 66             |

<sup>1</sup> St'u Рыбин Е.В., Пути повышения конкурентоспособности российских банков, М.: Финансы и статистика, 2008, էջ 129:

<sup>2</sup> St'u World investment report, 2017:

<sup>3</sup> www.worldbank.org 2017

Ըստ միջազգային հաշվարկների բանկի և JP Morgan-ի վերլուծությունների՝ կապիտալի հոսքերի և երկրի միջազգային պահուստների միջև գոյություն ունի հետևյալ կապը: Ֆինանսական ճգնաժամի հատվածում զարգացած երկրներում կապիտալի արտահոսքը և ներհոսքը գործում են համակարգային ձևով: Ի հակադրություն սրա՝ զարգացող երկրներում ֆինանսական ներհոսքը դադարում է՝ անկախ պահուստների չափից, արտահոսքը փոխվում է՝ կախված միջազգային պահուստների չափից:

ՀՀ-ն, լինելով փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ուղղակիորեն իր վրա է կրում միջազգային ֆինանսական շուկաներում տեղի ունեցող գործընթացների ազդեցությունները: ՀՀ ֆինանսական համակարգում մեծ տեսակարար կշիռ ունի բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ակտիվների շուրջ 90%-ը:

Հայաստանում, ի տարբերություն այլ երկրների, գոյություն ունեն տնտեսության իրական հատվածի զարգացման էական խոչընդոտներ: Ուստի, ունենալով կայուն և տեխնոլոգիապես զարգացած բանկային համակարգ, կարելի է հասնել նաև տնտեսության իրական հատվածի առաջընթացի: Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ երկրների բանկային համակարգերում օտարերկրյա կապիտալի ներկայության հիմնական ձևը արտասահմանյան դուստր բանկերն են, որոնք ստեղծվել են զրոյից կամ էլ տեղական բանկերի հիման վրա:

Օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը ՀՀ բանկային համախառն կանոնադրական կապիտալում 4 տարում նվազել է 74,6%-ից մինչև 61,8% <sup>1</sup>:

Այդուհանդերձ, ՀՀ բանկային համակարգի կարևոր առանձնահատկությունն է բանկերի կապիտալում արտասահմանյան մասնակցության բարձր մակարդակի առկայությունը: Վերջին ժամանակահատվածում բանկային շուկայից դուրս է եկել 4 մասնակից, որից 3-ը արտասահմանյան բանկերի դուստրեր էին՝ գերմանական «Պրո-կրեդիտ բանկը», ղազախական «ԲՏԱ բանկը» և ռուսական «Գազպրոմբանկը»:

Ըստ ՀՀ բանկերի ֆինանսական վարկանիշների՝ 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ 17 առևտրային բանկերից 16-ում արձանագրվել է արտասահմանյան կապիտալի մասնաբաժին, այդ թվում՝ օտարերկրյա ինստիտուցիոնալ բանկային հաստատությունների դուստրեր «HSBC Հայաստան բանկ» ՓԲԸ-ում (Մեծ Բրիտանիա), «Բիբլոս բանկ» ՓԲԸ-ում (Լիբանան), «Մելլաթ բանկ» ՓԲԸ-ում (Իրան) և «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ում (Ռուսաստան):

Խոշոր միջազգային ֆինանսական հաստատությունները ՀՀ բանկերի կապիտալում ներկայացված են ի դեմս ՎՋԵԲ-ի՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ, «Ամերիաբանկ» ՓԲԸ, «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Եվրոպայի խոշորագույն «Կրեդիտ Ագրիկոլ» բանկային խումբը՝ «Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ-Բանկ» ՓԲԸ, Ասիական զարգացման բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ, DEC բանկային խումբը և IFC՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ, Rural Impulse Fund՝ «Արարատբանկ» ԲԲԸ, ռուսաստանյան կապիտալը «Ռեզիոն» արդյունաբերական կորպորացիայի տեսքով՝ «Արդշինբանկ» ՓԲԸ, իրենց հողիինգներով «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ում՝ Էդուարդ Էոնեկյանը (Արգենտինա) և «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ում՝ Վարդան Միրմաքեշը (Շվեյցարիա): Վարդան Դիլանյանը (ՌԴ) «Անելիք բանկ» ՓԲԸ-ի վե-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԿԲ «Ֆինանսական կայունության հաշվետվություն», 2017:

րահսկիչ փաթեթի անուղղակի սեփականատերն է: Ռուսաստանյան գործարար Վազգեն Գևորգյանը անմիջականորեն և դուստր ընկերությունների միջոցով Evocabank ՓԲԸ-ի սեփականատերն է:

ՀՀ բանկային համակարգի միագումար ակտիվների շուրջ կեսը գտնվում է արտաքին թղթակցային հաշիվներում: ՀՀ-ում առկա իրական հատվածի բարձր ռիսկայնությամբ պայմանավորված՝ բնակչության բավարար գնողունակ մի զանգված նախընտրում է ներդրումներ անել արտերկրի ֆինանսական ակտիվներում: Ուսումնասիրելով ՀՀ բանկերում դրամական միջոցների ներհոսքն ու արտահոսքը՝ պարզ է դառնում, որ 2004–2017 թթ. ներհոսքը գերազանցում է արտահոսքը շուրջ 20 անգամ: 2007–2017 թթ. շուրջ 4 անգամ աճել է վարկեր/ ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2016–2017 թթ. միջինում կազմելով 39,84%<sup>2</sup>:

2016–2017 թթ. ՀՀ ԿԲ-ն իրականացրել է ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն՝ աստիճանաբար իջեցնելով վերաֆինանսավորման տոկոսը: Այն տատանվում է 6,25-6%-ի միջակայքում: Բացի դրանից, նվազեցվել է պարտադիր պահուստավորման նորմը և բանկերի կապիտալի համալրման արդյունքում ձևավորվել է իրացվելիության ավելցուկ՝ ազդելով ֆինանսական շուկայի տոկոսի նվազեցման վրա:

2016-2017 թթ. ՀՀ բանկերի կողմից տրված վարկերն ավելացել են միջինում 15,4-16%-ով՝ հիմնականում ի հաշիվ կորպորատիվ վարկային պորտֆելի ընդլայնման<sup>3</sup>:

Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն սպառողական (20,3%), արդյունաբերության (14,6%) և առևտրի (15,7%) ոլորտներին տրամադրված վարկերը:

2017 թ. չորրորդ եռամսյակի արդյունքներով<sup>4</sup> ԿԲ-ի սահմանած ընդհանուր կապիտալի համարժեքության (Ն1) նորմատիվի սահմանային արժեքին (12%) մոտ են եղել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն՝ 12,45%, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն՝ 12,74% և «Արդշինբանկ» ՓԲԸ-ն՝ 13,29%: Ընդհանուր իրացվելիության գծով (Ն31) նորմատիվի սահմանային արժեքին (20%) մոտ են եղել «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն՝ 24,10%, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն՝ 25,27% և «Յունիբանկ» ԲԲԸ-ն՝ 25,27%:

Ընդհանուր կապիտալի ցուցանիշները 31.12.2017 դրությամբ կազմել են 701,0 մլրդ դրամ՝ աճելով 3,01%-ով կամ 20,49 մլրդ դրամով, իսկ տարեկան՝ 8,09%-ով:

241,3 մլրդ դրամով աճել են ակտիվների ցուցանիշները և 31.12.2017 դրությամբ կազմել 4362,0 մլրդ դրամ՝ աճը՝ 5,86%:

Պարտավորությունների ցուցանիշներն աճել են 220,8 մլրդ դրամով և 31.12.2017 դրությամբ կազմել 3661,0 մլրդ դրամ, աճը՝ 6,42%:

Ընդհանուր բանկային համակարգի տվյալներով՝ եռամսյակի ընթացքում ՀՀ բանկային համակարգն աշխատել է շահույթով: 31.12.2017 դրու-

<sup>1</sup> <https://www.cba.am/amSitePages/Default.aspx>

<sup>2</sup> <https://www.cba.am/AM/SitePages/achfinancialbankingsystem.aspx>

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ԿԲ «Ֆինանսական կայունության հաշվետվություն», 2017 թ.:

<sup>4</sup> Տե՛ս Առևտրային բանկերի ինտերնետային կայքերում հրապարակված ֆինանսական հաշվետվություններ:

թյամբ շահույթը կազմել է 38,3 մլրդ դրամ, աճը՝ 29,8% կամ 8,78 մլրդ դրամ, տարեկան աճը՝ 19,9 մլրդ դրամ:

ՀՀ առևտրային բանկերը հիմնականում գործում են սուր մրցակցության պայմաններում՝ շատ հաճախ պայքարելով նույն սեգմենտի հաճախորդների համար: Վերջիններս ունեցել են 2.414.389 ֆիզիկական անձ հաճախորդ<sup>1</sup>, որոնք ունեցել են 4.442.975 բանկային հաշիվ և 1.714.679 վճարային քարտ: Հետազոտությունները ցույց տվեցին, որ ՀՀ չափահաս բնակչության 58,5%-ը (+/-2,38) կամ շուրջ 1,35 մլն մարդ չունի բանկային հաշիվ կամ քարտ<sup>2</sup>: Արդյունքում ՀՀ 1 ֆիզիկական անձը միջինում 2,5 բանկի հաճախորդ է, 4,6 բանկային հաշվի տեր և 1,8 վճարային քարտատեր: Ըստ հետազոտության՝ 1,35 մլն բանկային հաշիվ կամ քարտ չունեցողների 31%-ը (+/-2,87) կամ 420000 մարդ համարվում է զբաղված: Այլ կերպ ասած՝ ՀՀ 1,05 մլն զբաղվածների<sup>3</sup> շուրջ 40,3%-ը (+/-3.8) չունի բանկային հաշիվ կամ քարտ:

## Աղյուսակ 2

### *Բանկային հաշիվ կամ քարտ չունեցող զբաղված անձանց բաշխումը ըստ միջին ամսական եկամտի*

| <i>Միջին ամսական եկամուտ (հազ. դրամ)</i> | <i>Բաշխումը տոկոսային արտահայտությամբ</i> |
|------------------------------------------|-------------------------------------------|
| 0 կամ չգիտի                              | 15,5%                                     |
| 48 հազ. դրամից ցածր                      | 20,7%                                     |
| 48-120 հազ. դրամ                         | 21,2%                                     |
| 120 հազ. դրամ և ավելի                    | 42,6%                                     |

0 և մինչև 48 հազ. դրամ եկամուտ ունեցողները առանձնակի հետաքրքրություն չեն ներկայացնում բանկերի համար, ուստի շուրջ 290000 մարդ, որոնք զբաղված են և ունեն 48 հազ. դրամ և ավելի եկամուտ, հետաքրքրում են բանկերին, և քանի որ նրանց մեծամասնությունը ապրում է քաղաքային բնակավայրերում, տարածական առումով հասանելի է բանկերին:

Ուսումնասիրելով ՀՀ ֆինանսական համակարգը, առևտրային բանկերը և դրանց միջազգային ինտեգրման ուղիները՝ կատարվեցին մի շարք եզրակացություններ և ձևավորվեցին առաջարկություններ: Դիտարկելով միջազգային փորձը՝ տեսնում ենք, որ առաջատար օտարերկրյա բանկերը հրաժարվում են բազմաթիվ նոստրո հաշիվներից այլ երկրների բանկերում, քանի որ դա հանգեցնում է գործարքային ծախսերի մեծացման: Սա թույլ կտա ՀՀ առևտրային բանկերին՝ միջազգային հաշվարկային ծառայությունների լրիվ ցանկը, կոնկրետ օտարերկրյա բանկերի հետ համագործակցության ուժեղացման հաշվին, մատուցել ավելի բարձր որակական մակարդակով:

ՀՀ բանկային համակարգը, թեև արդեն մասամբ ներդրել է Բազել 3-ի սկզբունքները, այնուհանդերձ, չունի բավարար մրցունակություն, և բավականին դժվար է այդ պայմաններում վարկային միջոցների ներգրավումը: Մեղմելու համար առկա իրավիճակը, առաջին հերթին անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ բանկային օրենսդրության և վերահսկման համակարգում: Անհրաժեշտ է՝

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ, ԱՎԾ տարեգիրք, 2017 թ.:

<sup>2</sup> Տե՛ս CRRC Armenia «Կովկասի բարոմետր» 2017:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ, ԱՎԾ տարեգիրք, 2017 թ.:

1. օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի՝ ռեզիդենտների հետ դեպոզիտային գործընթացների սահմանափակումների վերացում,
2. կապիտալի ծագման և բանկի վարկանիշի վերաբերյալ լրացուցիչ սահմանափակումների սահմանում,
3. օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ընդհանուր կապիտալի նվազագույն նորմատիվի վերացում,
4. ՀՀԲՕ 13 հոդվածի համաձայն՝ ԿԲ-ն սահմանում է օտարերկրյա բանկերի կողմից ՀՀ տարածքում ավանդներ ընդունելու լրացուցիչ պայմաններ: Այս հանգամանքը սահմանափակում է մասնաճյուղերի՝ պասիվները լրացնելու հնարավորությունը:

Ուսումնասիրելով բանկերի հաճախորդների շուկան՝ պարզ դարձավ, որ ՀՀ առևտրային բանկերն ունեն զգալի չիրացված շուկայական հնարավորություններ: Հետազոտությունները ցույց տվեցին, որ բանկային հաշիվ կամ քարտ չունեցող ֆիզիկական անձանցից շուրջ 294000-ը կարող են հետաքրքրություն ներկայացնել բանկերի համար: Այսինքն, իրատեսական հնարավորություն կա՝ բանկերի հաճախորդների քանակը ընդլայնելու շուրջ 28%-ով: Գրավելու համար շուկայի այդ հատվածը, անհրաժեշտ է ուսումնասիրել նշված անձանց պահանջմունքները, ստեղծել համապատասխան «բանկային ապրանքներ» և գնահատել ամեն ապրանքի գծով եկամտաբերությունը:

2017 թ. չորրորդ եռամսյակի տվյալները ամփոփելով եզրակացնում ենք, որ բոլոր բանկերում առկա է իրացվելիության ավելցուկ: Բացի դրանից, աճել են բանկերի ROE (կապիտալի շահութաբերություն) ցուցանիշները. ամենաբարձրը եղել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում՝ 14,58% և «Արցախբանկ» ՓԲԸ-ում՝ 11,99%:

Վնասով է ամփոփել «HSBC Հայաստան բանկ» ՓԲԸ-ն, որի վնասը կազմել է 7,94 մլրդ դրամ և «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ն, որի վնասը կազմել է 3,97 մլրդ դրամ:

Մասամբ վերլուծվել է նաև ՀՀ առևտրային բանկերի ներդրումային միջավայրը, որից եզրակացնում ենք, որ իրական ՀՆԱ=f (ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված ընդհանուր վարկեր): Այս ֆունկցիայի համաձայն՝ տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է աստիճանաբար ավելացնել արդյունաբերական կազմակերպությունների վարկավորման ծավալները:

ՀՀ առևտրային բանկերի ներդրումային գործունեությունը հիմնականում խոչընդոտում են հետևյալ հիմնախնդիրները՝

1. ոչ լիարժեք կապիտալի շուկա,
2. գնաճի բարձր և անկանոն մակարդակ,
3. դրամ/արտարժույթ հարաբերությունների անկայունություն,
4. տեղական և օտարերկրյա ներդրողների համար ոչ հավասար պայմաններ և այլն:

Այսպիսով, անհրաժեշտ է վերացնել կամ մեղմել վերոհիշյալ խոչընդոտները, այնուհետև մշակել և կիրառել ներդրումային ռիսկերի կառավարման արդյունավետ մեխանիզմ: Առևտրային բանկերի կողմից ներդրումային միջավայրի բարելավման համատեքստում առաջարկում ենք առկա ֆինանսական հնարավորություններն օգտագործել հիմնականում գործարարության խթանման, վարկային տոկոսադրույքների նվազեցման և ներդրումների ապահովագրման կայացած ինստիտուտի ստեղծման ճանապարհով:

АРМАН ТАДЕВОСЯН

## КОММЕРЧЕСКИЕ БАНКИ РА И ИХ ПУТИ МЕЖДУНАРОДНОЙ ИНТЕГРАЦИИ

**Ключевые слова:** банк, общий капитал, рентабельность, кредит.

Основной акцент был сделан на оценку современного состояния банковской системы РА. Был проанализирован рынок клиентов торговых банков, в обобщенной форме была дана оценка финансового положения последнего квартала 2017 года, была исследована банковская инвестиционная деятельность. Были исследованы пути международной интеграции и размер участия иностранного капитала в коммерческих банках РА. Были сделаны соответствующие выводы и даны предложения.

ARMAN TADEVOSYAN

## COMMERCIAL BANKS AND WAYS OF THEIR INTERNATIONAL INTEGRATION

**Key words:** bank, total capital, rate of returne, credit.

The main emphasis has been placed on the current state of the Armenian banking system. Commercial banks customers' market has been studied. The assessment of the financial condition of the fourth quarter in 2017 has been summed up, the investment activity of the banking system has been examined. The ways of international integration of commercial banks and measure participation of foreign capital in the banking system has been examined. Appropriate conclusions have been done and suggestions has been given.

ԱՐՓԻՆԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Բանկային գործ,  
բակալավորիաբ, 2-րդ կուրս

## ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

**Հիմնաբառեր.** ավանդներ, առևտրային բանկեր, բանկային համակարգ, տոկոսադրույք, խնայողություններ

Առևտրային բանկերը ՀՀ ֆինանսական համակարգի կարևորագույն օղակներն են: Երկրի ֆինանսական համակարգի կայունության համար անհրաժեշտ է բանկային համակարգի առջև ի հայտ եկող խնդիրների հրապարակ լուծում: ՀՀ առևտրային բանկերի գերակա խնդիրներից է միջոցների ներգրավումը և վերջիններիս արդյունավետ բաշխումը: Այս հոդվածում ներկայացված են առևտրային բանկերի կողմից ներգրավվող ավանդների կազմն ու կառուցվածքը, բնութագրող ցուցանիշները, վերջիններիս վրա ազդող գործոնները: Հետազոտության արդյունքում կատարվել են համապատասխան եզրակացություններ և ուղիներ են առաջարկվել բանկերում տնային տնտեսությունների դրամական միջոցների ներգրավման համար:

Ինչպես ՀՀ ԿԲ-ի, այնպես էլ յուրաքանչյուր առևտրային բանկի կողմից մշակված ռազմավարությունն ու մարտավարությունը ուղղված են ի հայտ